Աղբիւր

Աղբիւրի յաւելուած

ՏԵՒԼԵԱՆ № 282

№ 32 կիրակի օգոստոսի 20 | տասնեւմէկերորդ տարի 1900

Ա ս պ ե տ

ԳԱՌՆԱԶԳԱՑՍ ԳԱՅԼԸ

II

Ութ տարի էր անցել այն օրից:

Մանուկը, որին երկար չանքերից յետոյ յաջողւել էր մտնել Չ. քաղաքի արքունական ուսումնարանը, դեռ ապրում էր Մովսէս աղի տանը և այնտեղից էր յաճախում ուսումնարան: Ընդունակութեանն ու աշխատասիրութեանը — դասերը միշտ լաւ էր սովորում և առաջնակարգ աշակերտներից մէկն էր — սակայն նա չէր կարողացել գրաւել ուսուցիչների սէրը, ընդհակառակն նրա վրայ նայում էին մի տեսակ կասկածով, զգւանքով... Նա իր շարժւածքներով մի անբացատրելի կասկած ու երկիւղ էր զարթեցրել իր ուսուցիչների սրտում, որոնց աչքում նա վարքով այն աստիճան գարշելի էր թւում, որ նրանք մի առիթի էին սպասում ուսումնարանից նրան հեռացնելու համար և այդ պիսով միւս աշակերտներին ազատելու նրա վտանգաւոր ընկերակցութիւնից և այդ արդէն այն ժամանակ, երբ հազիւ երկու տարի էր մնացել, որ նա պիտի աւարտէր ուսման ընթացքը: Իր հասակակից ընկերների մէջ նա տարիքով ամենից մեծն էր, հետեւապէս նրա վարքի օրինակը առանց հետեւանքի չէր մնում և նա մի վատ դայթակղութեան քար էր դարձել ամբողջ ուսումնարանում... Բայց ոչ. միայն ուսումնարանում չէին դործում նրա փչացած բարքն ու անբարոյական հակումները. նա վարակել, սրբապղծել էր և այն սրբազան օջախը, որ հիւրընկալել, պատսպարել էր նրան: Բարեսիրտ Մովսէս աղէն միամիտ առաքելի աղերսանքով մի օճ էր տաքացրել իր կրծքի վրայ, որը յետոյ ամենից առաջ պիտի խայթէր իր բարերարին և պիսի խայթէր անբուժելի, մահացու կերպով. թէև այդ մահը պիտի լինէր ոչ թէ ֆիզիքական, այլ աւելի սոսկալի — բարոյական...

Ութ տարի քաղաքում ապրելուց, ուսումնարան յաճախելուց յետոյ, Մանուկը այժմ բոլորովին փոխւել էր: Նա աւելի կոկւել ու յղկացել էր. նախկին կոշտ շարժւածքները տեղի էին տւել քնքոյշ, հրապուրիչ ձևերի. կոպիտ չուխայի և անշնորհք արխալուղի, լայն վարտիկի ու հաստ փափախի տեղ նա այժմ հագնում էր ուսումնարանի համազգեստը և ծածկում էր երիզաւոր գլխարկը դրոշմանիշով մխւսին. ոտքերին պապուշ էին նոր մոդայի կօշիկներ և այդ բոլորը այնպէս սազում էին նրան և այնպէս ներդաշնակւում նրա նրբացած ու գեղեցկացած դէմքին, կախարդիչ ժպիտներին, ճարտար խօսքերին... Նա ածում էր մի քանի տեսակ երաժշտական գործիքների վրայ, երգում էր իր բարիտոնի խրոխտ և բարձր ձայնով. իսկ ինչպէս գեղեցիկ պարել գիտէր խնճոյքներում ու հարսանիքներում: Միայն նրա աչքերը երբեմն փայլում էին մի իւանդոտ, անհամեստ ու զզւելի հայեացքով, որոնց մէջ ցոլում էր նրա սև հոդու ամբողջ մրուրը: Արտաքուստ կոկւել, գեղեցկացել ու հրապուրիչ էր դարձել նա, իսկ ներքուստ չէր կարողացել ազնւացնել իր արատաւոր հակումներով լի բնաւորութիւնը, իր խանդոտութիւնը, իր անասնական զգւելի կիրքը...

Նա այժմ 23 տարեկան էր. մի հասակ, երբ ամենից աւելի բուռն կերպով սկսում է եփ գալ խելահաս պատանու մէջ կիրքն ու խանդը. երբ սիրոյ զգացմունքը անդուլ կերպով բորբոքելով յաղորդ է որոնում և այդ դէպքում նա շատ անգամ բոլորովին անխտիր է լինում: Սիրտը ալեկոծւելով սէր է աղաղակում և իր ճիրաններում պերի դարձած երիտասարդին երբեմն մղում դէպի այնպիսի շէմքեր, ուր նա երբէք ոտք չէպիտի դնէ, եթէ իր սրտում դեռ չէ խեղդել երախտագիտութեան ու պարտաճանաչութեան սրբազան զգացմունքները:

Երիտասարդ մանուկը ոչ միայն բացառութիւն չէր այդ ընդհանուր տիպից, այլ և նրա մի փայլուն ներկայացուցիչն էր և նա իր գարշելի կրքերին զոհ բերեց մի առաքինի ընտանիքի պատիւը: Միամիտ ու չքնաղ Վարդիթերը չկարողացաւ դիմանալ նրա հրապուրանքներին և անձնատուր եղաւ... Թէև նա այժմ չորս երեխաներ ունէր և երկուսն էլ թաղել էր, բայց չէ՞ որ նա դեռ հազիւ երեսուն տարեկան էր, իսկ նրա մարդը արդէն 53...

Ջուտով մի չնչին առիթ ներկայացաւ և ուսումնարանից անդառնալի կերպով արտաքսեցին Մանուկին: Մովսէս աղի բոլոր միջնորդութիւնները ու չանքերը ապարդիւն մնացին նրան կրկին ընդունել տալու համար և նրան ուսումնարանում բացարձակ պատասխանեցին, որ Մանուկը այնպիսի տղայ է, որին պէտք է արտաքսել ոչ միայն ուսումնարանից, այլ և ամեն մի օրինաւոր ընտանիքից. ցոյց տւին, որ նա անուղղելի է իր մոլութեան մէջ և որ միակ ամենալաւ միջոցը նրանից հեռու մնալն է:

Մի ծանր կասկած զարթեց միամիտ Մովսէս աղի սրտում: Իր որդու պէս սիրած, փայփայած Մանուկի մասին նա լսեց այնպիսի բաներ, որոնց հաւատալ միանգամայն դժւարանում էր: Ի՞նչպէս կարող էր Մանուկը այդ աստիճան փչացած լինել, անարդարութիւն չէ՞ դա. անիրաւ հալածանքի հա-

մար ստեղծած մտացածին ստոր զրպարտութիւններ չէն դրանք նրա կամակոր ու քմահաճոյ ուսուցիչների կողմից: Խե՛ղճ Մանուկ, նա փախաւ դիւղի դատարկութիւնից ու խաւարից, եկաւ քաղաք ուսում ու լոյս որոնելու, ուր տարի կիսապանդուխտ դրութեան մէջ տանջեց իրան և ահա արդէն նրա պատակին մօտեցած ժամանակ, մի անդութ հարւածով զրկւում է իր ապագայից. չքանում են նրա փայլուն հրաշներն ու վեղեցիկ մտաղրութիւնները: Այո, դժբաղխտ է նա: Մէկ այդպէս էր մտածում Մովսէս աղէն, մէկ էլ նրա դլխում մտքերի բոլորովին հակառակ չեղաշրջում էր տեղի ունենում: Ինչպէս ծերութեան շրջանում գտնուղ մարդ նա այժմ աւելի տրամադիր էր կասկածելու: Իսկ եթէ ուսուցիչների ասածները ճշմարիտ են. ոչ թէ բոլորը, այլ եթէ նոյն իսկ նրանց մի մասն ուղիղ լինէը... Եթէ Մանուկը չիրաւի այնպէս արատաւոր է, ապա էլ ինչ կապ կարող է լինել իր և նրա մէջ. էլ ինչպէս նա իրաւունք ունէր թոյլ տալու, որ այդպիսի մի ճիւաղ ոտք դնէը իր հալալ օջախի մէջ: Իր կնոջ հաւատարմութեան մասին նա կասկածել չէը կարող, ո, մի՞թէ վարդիթերը կրպաւաճանէը իրան, ո՛չ, նա մի հրեշտակ է, նա ընդունակ չէ այդպիսի դիւական քայլ անելու: Սակայն նա դեռ երիտասարդ է, կեանք ու սէր վայելելու փափագ ունէ. այո՛, կեա՛նք և սէր, որ այլ ևս ինքը Մովսէս աղէն չէ կարող տալ նրան... Կասկածը աւելի հեռու է տանում Մովսէս աղին. նա ըսկսում է պատկերացնել վարդիթերի և Մանուկի յարաբերութիւնները դէպի միմեանց և դէպի ինքը. նրա՛ն թւում է, թէ Մանուկը արդէն դողացել է իր աննման վարդիթերի սիրտը, որ նա իր մտքում արհամարհում ու ծաղրում է իրան, որ նա իր տանը մնում է միայն վարդիթերի համար: Նրան թւում է, որ վարդիթերը արդէն կաշկանդել է նրա սիրոյ թևակարդում, որ նա այլ ևս չէ սիրում իրան նախկին վառ սիրով, որ նա այժմ սառել է իրանից, որ նա այժմ միայն կեղծում է և առ երես է կապւած իր հետ... Այդ մտքերը արդէն մի քանի շաբաթներից ի վեր յուզում էին նրա սրտում և կտրում նրա քունն ու դադարը: Մովսէս աղի կեանքը թունաւորւած էր, կասկածը տանջում էր նրան և նա վճռել էր մի պատրւակ բռնել Մանուկին իր տնից հեռացնելու համար. իսկ մինչև այդ առիթը գտնելը նա մըտքում որել էր հնտամուտ լինել նրանց ամեն քայլին և անպատճառ լմանալ ճշմարտութիւնը:

—

III

Գողը միշտ զգոյշ է լինում: Խորամանկ Մանուկը չէր կարող չընկատել Մովսէս աղի կասկածոտ վերաբերմունքը: Նա հասկացաւ, որ իր դիմակը պատռւել է արդէն, կամ մօտ է պատռւելուն և վճռեց թողնել այդ ընտանիքը: Ը. քաղաքի ուսումնարանում անյաջողութեան հանդիպելով, նա մտապրեց անպատճառ առաջ տանել իր ուսման գործը Թ.-ում, իսկ յետոյ գնալ Մոսկւա իրաւաբանական մասնագիտութիւն ստանալու: Ոչ ուսման ծարաւը, ոչ էլ այդ մասնագիտութեամբ ճնշւածի իրաւունքները պաշտպանելու, կամ ճշմարտութիւնը երևան հանելու գործին ծառայելու տենչն էր նրան ստիպում այդպէս յամառ կերպով ձգտելու իր ուսումը կատարելագործելու, ո՛չ, այլ էր դրա դրդիչ պատճառը: Նա թէև գիւղացի էր, բայց հպարտ հակումներ ունենալով, այլ ևս չէր կարող գիւղը վերադառնալ և այդ պատճառով էլ վճռել էր ձեռք բերել այդ ժամանակի ամենաշահաւէտ արհեստը—փաստաբանութիւնը, որովհետև այն ժամանակ այդ կարիերը, ինչպէս մասամբ և այժմ, շատ լաւ էր ապահովում մարդկանց նիւթական դրութիւնը, հարստացնում էր նրանց, փառքի ու պատւի էր հասցնում առանց դժւարութեան:

Եւ այսպէս Մանուկը շուտով թողնելու էր այդ ընտանիքը: Քանի մօտենում էր նրա գնալու օրը, այնքան նա մտահոգ, անհանդիստ էր դառնում: Գեղեցիկ Վարդիթերից հեռանալը մեծ տանջանք էր լինելու նրա համար, և նա աշխատում էր գոնե այդ մի քանի օրը ամբողջովին քամել սիրոյ բաժակը... Մանուկն ու Վարդիթերը այժմ խիստ յաճախ էին տեսնւում միմեանց հետ. նրանք երկուսն էլ կարծես բոլորովին մոռացել էին և՛ կեանքը և՛ շրջապատող աշխարհը. մոռացել էին, թէ ինչ մեծ վիհ էր բաժանում նրանց միմեանցից, որի վրայից անգամ նրանց անդուլ սէրը կարողանում էր նրանց միացնել իրար հետ... Այլ ևս ժամանակ նրանց համար գոյութիւն չունէր. Մանուկը միշտ փակւած էր իր սենեակում, իսկ Վարդիթերը նրա դրկում... Սա արդէն մոռացել էր և՛ ամուսին, և՛ զաւակներ և՛ ընտանեկան պատիւ... Կանայք վաղաշոտ կիրքը բռնել էր նրա մէջ ինչպէս վառօդ, և այլ ևս ոչ մի ոյժ չէր կարող զսպել նրան. .

Այդ ամենն արդէն նկատել էին հարևանները. բարեկամները երես էին դարձրել այդ երբեմն պատկառելի ընտանիքից. Ը. քաղաքի բամբասասէր ոյզ հասարակութիւնը միմիայն նրա մասին էր խօսում: Խայ-

տառակւել էր Մովսէս աղէն, ամենքն էլ նրան արհամարհում և ծաղրում էին: Իսկ նա ինքը մի թե քնած էր և չէր տեսնում, չէր լսում այդ ամենը: Ո՛չ, նա վերջապէս լմացաւ այդ ամենը, թէև, աւա՜ղ, շատ ուշ: Նրա կասկածներն արդարացան և նա զգաց իր անյատակ թշուառութիւնը: Ի՞նչ անէր նա այժմ. թողնէր, հեռանար այն տնից, որի պատիւը ցեխաթաթախ էր եղել, թէ՞ սպանէր այն նենգ օձին, որը աղաւնու կերպարանքով մտաւ իր անարատ յարկի տակ ու սրբապղծեց նրան, թէ՞ խեղդէր իր կնոջը, որը նախաստեղծ Եւայի նման և՛ խաբուեց և՛ խաբեց իր մարդուն... Բայց դուրս ամենից աւելի հէնց ինքն էր մեղաւոր, որ միամտաբար իր տանն ընդունեց մի օտար տղայի և թոյլ տուեց նրան զողանալ իր կնոջ սիրտը, որ անշուշտ միայն ու միայն իրան պիտի պատկանէր: Իսկ ինչո՞ւ Վարդիթերը դաւաճանեց իրան. ո՜, ինչ զզելի հրէշներ են այդ կանայք, ինչպէս նրանք երբեմն սիրել գիտեն այնքան խորին, այնպէս անձնուէր կերպով, և ինչպէ՜ս երբեմն էլ կարողանում են այնպէս վարպետ կերպով կեղծել իրանց սէրը ու խաբել իրանց պաշտողներին: Ի՞նչ իրաւունք ունէր նա այդպէս վարուելու, վերջապէս ինչը կարող էր նրան ստիպել այդ անելու... Վերջին հարցը ինքն իրան տալիս՝ Մովսէս աղէն մի րոպէ կանգ առաւ տատանման ու անորոշութեան մէջ. կարծես նա այժմ գտնում էր դրա պատասխանը: Նրա աչքի առաջ պատկերացաւ իր ամուսնական ամբողջ 15-ամեայ կեանքը: Նա յիշեց այդ կեանքի առաջին մի երկու տարիները, երբ ինքը ինչպէս մի հաւատացած ու կրքերով վառուած տղամարդ իր գրկի մէջ էր սեղմում դեռ երեխայ Վարդիթերին, որին համարեա անճանօթ էր սիրոյ զգացմունքը: Յիշեց թէ ինչպէս այնուհետև Վարդիթերը սկսում էր հետզհետէ ծաղկել ու զարգանալ սիրոյ հոգեկան ու ֆիզիքական պայմանների մէջ, ինչպէս նա աւելի ու աւելի վառվռուն ու խանդոտ էր դառնում, իսկ ինքը դրա հակառակ հետզհետէ հանդարտում, պանդաղում ու ծանրանում էր և իր սրտում սկսում էր նւազել ու հանդչելու մօտենալ սիրոյ երբեմն այնպէս բոցավառ խարոյկը: Նա յիշեց և վերջին տարիները, երբ սիրոյ հրդեհը Վարդիթերի սրտում իր ամենալայն ծաւալն ստացաւ, սիրոյ խանդը իր զագաթնակէտին հասաւ, իսկ ինքը այլ ևս ոյժ չունէր դիմադրելու... Վարդիթերը սէր էր պահանջում նրանից, այո՛, պահանջում էր միշտ աւելի ու աւելի, իսկ ինքը այլ ևս անզօր էր. Այն ժամանակից արդէն իսկ նա կարծես դուշակում էր այս օրերը և ինչպէս տեսաւ, չէր սխալւել: Ի՞նչ անել այժմ: Մանուկը շուտով կըհեռանայ իր տնից, թողնելով իր յետևից բարոյապէս աւերակ դարձած մի ընտանիք. ինքը Մովսէս աղէն և՞ս հեռանայ այնտեղից իր վրայ առնելով աշխարհի ծաղրն ու արհամարհանքը, ոտքի հարւածով անբարոյականութեան աւելի խորին անդունդը գլորէ իր անհաւատարիմ կնոջը և երեսի վրայ ձգի իր անմեղ զաւակներին, թէ՞, հէնց լ սէր այդ վերջիններին, կոյր ու խուլ ձևանայ, չըտեսնի այդ բոլոր խայտառակութիւնները, չըլսի այն անթիւ բամբասանքները, մնայ և ցմահ ողբայ իր աւերակ դարձած ընտանիքը:

Նա ընտրեց այդ վերջինը:

Այո՛, Մովսէս աղէն չըփոխեց իր կեանքի եղանակը, բայց ինքը փոխուեց ամբողջապէս: Ջքացաւ նրա ուրախ, անհոգ բնաւորութիւնը, անհետացան նրա անմեղ ծիծաղն ու բարի ժպիտները, դաժան ու մտազբաղ դարձաւ նա, տխրութեան ու վշտի թանձր քողով ծածկուեց նրա դէմքը: Նա ո՛չ միայն չըկարողացաւ մոռանալ այդ կրած բարոյական ծանր նախատինքը, այլ ընդհակառակն հետզհետէ սկսեց զօրանալ նրա մէջ ամօթի և կրած անպատուութեան տանջող զգացմունքը: Նա մոռացաւ ամեն ինչ, կենդրոնացաւ ինքն իր մէջ, սկսեց գուրգուրել, փայփայել իր վշտերը և ապրել միայն նրանց հետ...

Նրա աչքից ընկան և՛ տուն, և՛ ընտանիք, և՛ զաւակներ, և՛ իր խանութի գործը. միշտ մտազբաղ էր նա և անուշադիր, կարծես մօտ էր ցնորւելուն... Խորտակւեց նրա ընտանեկան կեանքը, ընկաւ նրա գիրքն ու պատիւը, փչացաւ առևտուրն ու վաճառականական գործը...

IV

Քսանից աւելի տարի էր անցել այն ժամանակից:

Ջ. քաղաքում վաղուց դադարել են Մովսէս աղի դժբախտութեան և նրա ընտանեկան խայտառակութեան մասին խօսելուց. մոռացել է այդ երբեմն յայտնի ընտանիքը, որովհետև նա այժմ այլ ևս համարեա թէ չըկայ: Ջատ վաղուց արդէն հող է դարձել չքնաղ Վարդիթերը. նա իր ձեռքով իր բախտը խորտակելուց յետոյ չըկարողացաւ երկար ապրել: Ընտանեկան ծանր նախատինքը, բարեկամների ու ամբողջ Ջ. քաղաքի արհամարհանքը, իր մարդի կիսացնորւած հոգեկան հիւանդոտ դրութիւնը և վերջապէս նրա առևտրական յաջող գործի խանգարումը, այդ բոլորը ծանր կապալի պէս ընկան Վարդիթերի սրտի վրայ և նրան անտանելի բա-

Սլաւոնական գեղեցկուհի

բոյական տանջանքները պատճառեցին։ Նա այդ ամենի միակ պատճառն ու մեղավորը իրան համարեց և այդ տանջող միտքը այնքան մաշեց նրան, որ իրանց դժբախտանալուց հազիւ երեք տարի անցած՝ նա անկողին մտաւ և այլ ևս չառողջացաւ։

Նրա մեռնելուց յետոյ շատ չանցած՝ մեռան և նրա զաւակներից երկուսը և այժմ այդ ընտանիքից մնում են Պօլսէսը (նա այժմ ոչ միայն աղայ չէ, այլ մի ամենաերեւելի, ամենահաղթատ չրկիր է) և իր երէու որդիքը, որոնք ինչպէս բանւորներ ծառայում են ուրիշների մօտ չնչին վարձով։ Ք. քաղաքում նոր մարդկանցից ոչ ոք չէ կարողանում հաւատալ, որ այնտեղ շաբաթ օրերը շուկայում ողորմութիւն խնդրող զառամեալ, հիւանդոտ ու վշտահար Պօլսէսը երբեմն այդ քաղաքի առաջնակարգ մարդկանցից մէկն է եղել և կորցնելով հարստութիւն, կին, երեխաներ և մինչև իսկ ընտանեական պատիւ, այժմ ապրում է մուրալով, և ինքն էլ չգիտէ թէ ինչի համար է այլ ևս իր կեանքը։ Որքա՜ն նա ուրախ կըլինի մեռնելու, բայց այդ միակ սփոփանքն էլ Աստուած դեռ չէ տալիս նրան...

Այսպէս ահա դժբախտացան ու փչացան Պօլսէս աղա Պ.—եանը և իր ամբողջ ընտանիքը, իսկ դրանց ամենի կորստեան ամենամեծ պատճառներից մէկը եղող Փ. գիւղացի Մանուկը բախտաւորւեց, նա յաջողակ ու ապահով փաստաբան դարձաւ։ Թէև Ք. քաղաքը թողնելուց յետոյ նրան չըյաջողւեց ոչ մի տեղ բարձր մասնագիտական հմտութիւն ձեռք բերելու, սակայն Թ. քաղաքում նա մտերմացաւ մի ինքնուս և ամեն տեսակ մեքենայութիւնների մէջ վարժւած աբլակատի հետ և 3 տարի շարունակ նրա գրագրի պաշտօնը կատարելուց յետոյ, երբ արդէն իր ուսուցչից լաւ սովորել էր դատաստանական գործում ճարպիկ կերպով լորամանկութիւնները սարքելու, մեղադրելու և պաշտպանելու ձևերը, նա, ինչպէս մի զարգացած մարդ և փորձած իրաւաբան, վերադարձաւ կրկին Ք. քաղաքը և ընդմիշտ հաստատւեց այնտեղ։ Շուտով նա խիստ մեծ հեղինակութիւն ձեռք բերեց այդ քաղաքում, նրա անունը բարձրացաւ ու հռչակւեց. ամենքն էլ սկսեցին ակնածել նրանից և մինչև անգամ վախենալ։ Ամենազօր է Մինայ Արակելիչը—ինչպէս այժմ կոչում են նրան Ք. քաղաքում,—նա կարող է ոճրագործին բոլորովին արդարացնել, Սիբիրի ճանապարհից դարձնել և դրա հակառակ ում հետ որ թշնամացաւ, վայ նրան, աւելի լաւ կըլինի, որ այդպիսին օր առաջ հեռանայ Ք. քաղաքից, եթէ ոչ մի օր անշուշտ Մանուկ աղայի—այդպէս են ասում նրան իրանց գիւղացիք,—շնորհիւ նա բանտում կըլինի շղթաները ոտքերին։ Եւ նրա մասին ի զուր տեղը չէ կազմւել այսպիսի համոզմունք Ք. քաղաքում։ Ամենքն էլ շատ անգամ ականատես են եղել թէ ինչպէս նրա ձեռքով աւերւել են շատ տներ, անբախտացել անթիւ ընտանիքներ ոճրագործն ու վաշխառուն արդարացել են ու փառաւորւել, իսկ շատ անմեղներ էլ բանտի մէջ են վերջին շունչերը փչել... Այժմ ամենքն էլ գիտեն որ կարելի է անպատիժ գողանալ, հարստահարել, վիրաւորել ու մինչև անգամ սպանել, քանի որ աբլակատ Մանուկ աղէն կարող է ազատել իրանց ամեն պատիժներից, բաւական է միայն շահել նրան ինչպէս կարող է։ Միշտ մեղաւոր մարդիկ են դիմում նրան, քանի որ այդպիսիների աւելի դժւարութեամբ է յաջողւում իրանց գործը յանձնել մի քիչ բարեխիղճ փաստաբանի և Մանուկ աղէն յաջողութեամբ առաջ է տանում իր գործը։ Նա ունի սուտ վկաների մի ամբողջ լեգէօն, որոնց օգնութեամբ յաջողեցնում է տանել իր անարդար դատերը... Մանաւանդ նա մի առանձին ախորժակով ընդունում է կատարողական թերթեր և գնում է վեր գրելու պարտապանների կայքերը. իսկ այդ ժամանակ երեխաների ճիչերը, կանանց ու աղջիկների լացն ու արտասուքները, պարտապանի յուսահատ տխրութիւնն ու ամօթը ոչ միայն չեն շարժում նրա սիրտը, չեն խղճահարում նրան, այլ ընդհակառակն այդպիսի դէպքերում նա միշտ մի տեսակ դիւական հրճւանք է զգում և նրա հոգին մի վայրենի, մարդակեր բաւականութեամբ է լցւում... Ասում են Ք. քաղաքի ոչ մի փաստաբան այնքան յաջողակ չէ իր գործում. նրա տունը միշտ լի է լինում գանգատաւորներով, որոնցից նա ոչ մէկին չէ մերժում. հաւատարակէս յանձն է առնում և պաշտպանել անմեղին և՛ ազատել ոճրագործին, հարցը միայն սակագնի մէջ է քիչ ձգձգւում...

Շնորհիւ իր ձեռք բերած այդպիսի հեղինակութեան, նրա կլիէնտները անչափ շատ են և նա այժմ նիւթական սպէս ապահով կարող է համարւել։ Ապրում է իր սեպհական երեք յարկանի տներում, առաջնակարգ փողոցի վրայ քաղաքի կենդրոնում, շարունակ կառքով է շրջում և սամոյրէ մուշտակ ծածկում։

Նօսար

***

Երբէն ծածկւեց հայրենիքս
Հորիզոնի յետևում,
Որտեղ Թողի սիրելիքս
Մտածմունքի խոր ծովում։

Նրան, որին պատահել է
Հայրենիքից բաժանւել,
Յայտնի է, թէ որքան ծանր է
Սուրբ վայրերից անջատւել։

Դառն է ժամը, երբ պիտ Թողնես
Օրօրանը պապերիդ,
Որպէս նաև այն վայրկեանը,
Երբ էլ չկայ սիրելիդ։

Հեռու, հեռու հայրենիքից
Թռչել էի ես ուզում
Եւ անողոք, չար տանջանքից
Ազատութիւն երազում։

Այնտեղ, հեռու պանդուխտ երկրում,
Ես շատերից մոռացած՝
Անդորրութիւն էի փնտռում,
Իմ վշտերից հալածւած։

Սակայն աւաղ, ուր էլ գնանք,
Չենք ազատւիլ տանջանքից,
Քանի կեանքը բաղկացած է
Վշտի անվերջ հիւսւածքից։

Ս. Պարայեան

1899 թ. 29-ին յուլիսի



ԿՈԼՈՆԻԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ԱՆՑԵԱԼՈՒՄ ԵԻ ՆԵՐԿԱՅՈՒՄ *)

IV

ՅԵՏԱԴԻՄԱԿԱՆ ԿՈԼՈՆԻԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆ

—

Ֆրանսիացիները այս վերջին 20 տարւայ ընթացքում շատ մեծ չափերով սկսեցին անդրովկիանեան երկրներ գրաւել։ Մենք արդէն տեսանք, թէ ինչպիսի յաջողութիւն ունեցան նրանք Ալժիրում։ Բոլոր կոլոնիաները, բացի Ալժիրից, կառավարութեանը նստում են տարեկան կլոր հաշւով 70 միլիոն ֆրանկ։ Սա մի չափազանց մեծ գումար է։ Ֆրանսիական արտահանութիւնն էլ դէպի այդ կոլոնիաները մօտաւորապէս այդ գումարն է կազմում (1890 թ. ֆրանսիական արտահանութեան ընդհանուր—3,753 միլ. ֆրանկ—գումարից 70 միլ. այդ կոլոնիաներն են ներմուծած), սակայն 1885 թւականից դէսը,—երբ այդ գումարը 100 միլ. էր հասնում,—արտահանութիւնը հիմա ընկած վիճակում է գտնւում։

Եթէ այդ թւանշանները գերմանականից մեծ էլ են, այդուամենայնիւ նրանք շատ չնչին են արտահանութեան ամբողջ գումարի համեմատութեամբ։ Կոլոնիաները բոլորովին չեն ազդում արտահանութեան վրայ, չնայելով որ ֆրանսիական արդիւնագործները, իրանց հայրենիքին պատկանող կոլոնիաներում, օտարազգի մրցակիցների համեմատութեամբ, նախանձելի իրաւունքներ են վայելում, ինչպէս օրինակ՝ մաքսերի ազատութիւնը և զանազան տեսակ կառավարչական հովանաւորութիւնները։ Այս էլ ասելու է, որ Ֆրանսիայում կոլոնիական քաղաքականութեանը ուղղութիւն տւողները աւելի ևս բիւրօկրատիան, զինւորականութիւնը և մանաւանդ խոշոր ֆինանսիստներն են, քան, օրինակի համար, Գերմանիայում։ Այդ մարդիկը Ֆրանսիային Տունիս, Տոնկին, Մադագասկար հասցրեցին, ի ցնծութիւն զօրքի ու նաւատորմիղի. կամ աւելի ճիշտ է ասել՝ ի ցնծութիւն զօրապետների, որոնք պապակւում էին 1870 թ. պարտութեան արատը իրանց վրայից սրբելու ցանկութիւնից։ Այդ գաղափարները Ֆրանսիայում հիմա աւելի են թագաւորում, քան Գերմանիայում, որովհետև այնտեղ մանր բուրժուազիան ու գիւղական դասակարգը աւելի զօրաւոր են, իսկ խոշոր արդիւնագործութիւնը աւելի քիչ է զարգացած, քան Վոգէզների միւս կողմում։ Պրոլետարիատի քաղաքական նշանակութիւնը այնտեղ շատ թոյլ է, նոյն իսկ նա չէ համապատասխանում երկրի արդիւնագործական զարգացման աստիճանին, որովհետև, երկուսից աւելի զաւակ չունենալու սիստեմի շնորհով, գիւղական դասակարգը և մանր բուրժուազիան աւելորդ բանւորական ոյժ չեն արտադրում, որոնք կարողանային արդիւնագործութեանը նւիրւել։ Այդ պատճառով էլ արդիւնագործութիւնը իր բանւորական ոյժի պակասը լրացնելու համար, արտասահմանից է աշխատաւորներ բերում։ 1896 թ. Ֆրանսիայում օտարացի-

*) Տես **Տարազ** № 31.

Պիցամզուցցեր

ների թիւը միլիօնից աւելի էր։ Այդ է պատճառը, որ արդիւնագործական պրոլետարիատի մի նշանաւոր մասը Ֆրանսիայում քւէարկելու իրաւունք չունի և քաղաքական առումով անզօր է։ Այսպիսով պարզւում է, թէ ինչու Ֆրանսիան, չընայելով իր հանրապետական կառավարչական կազմուածքին, Գերմանիայից աւելի չետադիմական է և թէ ինչու նրա կենսական մթերքների մաքսերը աւելի բարձր են ու նրա արդիւնագործութիւնը, արտասահմանի հետ մրցելիս, աւելի է ճնշւում «Ազգային աջխտաճմբի հովանաւորութեան», մաքսերի հովանաւորող և կոլոնիական ձեռնարկութիւնների քաղաքականութիւնը շատ ծանր նստեց արդիւնագործութեան վրայ։ Հայց և հէնց այդ քաղաքականութիւնն է ստիպում, կարելի եղածին չափ, յայն մոնոպոլիա ստեղծել Ֆրանսիական արդիւնագործութեան համար, գոնէ այնպիսի արտաքին շուկայում, որտեղ ոյժ կայ, այսինքն՝ կոլոնիայում։

Ֆրանսիական քաղաքականութիւնը ստիպում է Անգլիային էլ իր կոլոնիաները ընդարձակելու, և այդ ոչ թէ նոր երկրներ գրաւելու ձգտումից դրդւած, այլ լոկ ինքնապաշտպանութեան համար, որովհետև այդ միջոցով միայն նա կարող է մոնոպոլիայից ազատել այն երկրների մեծ մասը, որոնք դեռ ոչ գրաււած են և ոչ էլ բաց են եւրոպական առևտուրի համար։ Անգլիայի գրաւած բոլոր երկրներն էլ բաց են ամբողջ աշխարհի արդիւնաբերութիւնների համար։ Եթէ այդ երկրներում հովանաւորող մաքսեր կան, դրանք նոյնչափ անգլիական արդիւնաբերութեանն են վերաբերւում,—կամ գոնէ վերաբերւում էին,—որչափ և միւս երկրների արդիւնաբերութեանը։ Ինչ փոփոխութիւններ էլ որ հիմա լինում են այդ ուղղութեամբ, դարձեալ ինքնապաշտպանութեան բնաւորութիւն են կրում, և Անգլիան ստիպւած է իր կամքի հակառակ այդ փոփոխութիւնները մտցնել իր կոլոնիաներում, որովհետև այժմ բոլոր եւրոպական պետութիւնները մաքսերի հովանաւորող քաղաքականութեան են հետևում։

Իրերի այդ դրութիւնը ֆինանսիստների կողմից շահագործելը շատ բնական է։ բայց և Ռոդս ու ընկ. այնպիսի ժողովրդականութիւն ու յաջողութիւն չէին ունենայ Անգլիայում, եթէ եւրոպական պետութիւններից մի քանիսը չըձգտէին շարունակ նորանոր երկրներ գրաւել Աֆրիկայում ու մոնոպոլիա դարձնել, իսկ սև երկրի մի նշանաւոր մասը այդ բանից ազատելու և ազատ առևտուրի համար պահպանելու միակ միջոցը մնում է այն, որ բրիտանական կոլոնիաները փութով ընդարձակւեն։

Այն բոլոր ազգերի համար, որոնք համաշխարհային շուկայում մրցելու ընդունակ արդիւնագործութիւն ունեն, Ֆրանսիայի և Անգլիայի միջև կատարւող այս կատաղի մրցման մէջ, աւելի շահաւէտ է վերջինի յաջողութիւնը տեսնել։ Մինչև հիմա Գերմանիայի աննշան կոլոնիաների շնորհով յառաջ եկած վատ հետևանքներից մէկն էլ այն է եղել, որ դրանց պատճառով մի-մի անգամ Գերմանիան ընդհարում է ունեցել Անգլիայի հետ Աֆրիկայում, ի մեծ ցնծութիւն ֆրանսիական հովանաւորիչների ու կոլոնիական քաղաքականութեան վարիչների։

Հայց այստեղ էլ, ինչպէս և ընդհանրապէս յաճախ լինում է կոլոնիական քաղաքականութեան ժամանակ, վաճառականութիւնից աւելի մեծ օգուտներ են սպասում, քան իրապէս ստացւում են։ Անգլիայից զատ, կոլոնիական քաղաքականութիւն վարող պետութիւններից և ոչ մէկը Աֆրիկայից ոչինչ չէ ստացել, բացի դէֆիցիտը, պարտութիւնները ու բարքերի կոպտանալը։ Մինչև իսկ Անգլիայի համար էլ աֆրիկեան շուկան շատ մեծ արժէք չունի, եթէ մի կողմ թողնենք Եգիպտոսը, որտեղ 1892 թ. նա 3 միլ. ֆունտ ստերլինգի ապրանք է արտահանել (իսկ Գերմանիան 1895 թ. համարեա 6 միլ. մարկի է արտահանել), և Կապի երկիրը, որի ոսկու և ադամանդի հանքերի շնորհով, նշանաւոր քանակութեամբ ապրանք է արտահանւում Անգլիայից (1892 թ.—8 միլ. ֆունտ ստերլ.), նոյնպէս և Գերմանիայից (1895 թ.—13 միլ. մարկ)։ Թէ ինչ նշանակութիւն ունին կոլոնիաները, բացի Ալժիրից, Գերմանիայի ու Ֆրանսիայի արդիւնագործութեան համար, այդ մենք արդէն տեսանք։ Թէ ինչ օգուտ ստացաւ Իտալիան իր Աֆրիկայում ունեցած արկածից, այդ էլ յայտնի է—դա նրա սնանկութիւնը միայն փութացրեց.

Իսկ Կոնգոն։ Դա էլ շատ հեռու չէ Բելգիային սընանկացնելուց. և այդ էր պատճառը, որ դրա հաստատիչը հիմնադիրը *) շտապեց իր ստեղծած կոլոնիական պետութիւնը իր հպատակների վզին փաթաթել, չընայելով որ սրանք սաստիկ բողոքում էին այդ եղանակով «պետութիւնը ընդարձակելու» դէմ։ Բելգիայից Կոնգո արտահանւած ապրանքների գումարը 1894 թ. 6,240,000 ֆրանկի էր հասնում (իսկ այդ տարում Բելգիայից $1^1/_2$ միլիարդ ֆրանկի ապրանք է արտահանւել)։ Այդ պետութեան դէֆիցիտը, 1895 թ. նախահաշւով, 4,400,000 ֆրանկ է կազմում։

Համարեա թէ բոլոր կոլոնիաներ հաստատող եւրոպական ազգերին Աֆրիկան միշտ աւելի անկման պատճառ է դառել, քան թէ զօրացրել է։ Ամենախոշոր ֆինանսիստները այդ պարագայում միշտ չորից չոր են դուրս գալիս, բիւրոկրատները ու զինուորները իրանց համար ապարէզ են գտնում այնտեղ, հրապուրելով դափնիներից ու չաղ ռոճիկներից, և եթէ նրանք զոհ չեն դառնում այնտեղի կլիմային ու բնիկներին, վայելուչ կենսաթոշակներ էլ են ստանում։ Իսկ եւրոպական կոնտինենտի արդիւնագործ դասակարգերին Աֆրիկայի կոլոնիաները այնպիսի չնչին օգուտ են բերում, որ մինչև իսկ նրանց համար արւած ծախսերն ու կրած ծանրութիւնները էլ չեն ծածկւում։

Այն ինչ չնչին քանակութեամբ ապրանքներ կարելի էր այնտեղ արտահանել և այն ժամանակ, եթէ Եւրոպայում ազատ առևտուրի քաղաքականութեան շրջանը շարունակւէր առաջւան պէս. իսկ այդ դէպքում՝ թէ շատ աւելի քիչ զոհողութիւններ պէտք կըլինէր անելու և թէ այդ զոհողութիւններն էլ ամբողջապէս կըծանրանային այդ արտահանութեամբ հետաքրքրւող անձանց վրայ միմիայն։

Ռ. Ս.

(Կըշարունակւի)

*) Բելգիայի Լէօպոլդ կայսրը։

Թ. Ծ.

Քննադատական

Դրականություն եւ մամուլ

—

ՄԵՐ ՔՆՆԱԴԱՏՆԵՐԻ ԿԱՐԾԻՔՆԵՐԸ *)

Մ. ՆԱԼԲԱՆԴԵԱՆՑԻ ԿԵՆՍԱԴՐՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

—

(Շարունակութիւն եւ վերջ *)

Թէ որքան դժուար անպատրաստ են մի որևիցէ գրուածքի լեզուի հեղինակաւոր դատաւոր լինելու,—այդ երևում է և նոցա մեր լեզուի մասին յայտնած կարծիքներից։ «Լեզուն և ոճը թէև չէ (?) փայլում իւր ճկունութեամբ, իւր նրբութեամբ, չէ հնչեցնում շարքերի միջից լարերի ձայնը, բայց այնուամենայնիւ հասկանալի է»։ Միթէ այդ կարծիք է։ Այո, եթէ կամենաք, կարծիք է, բայց այնպիսի կարծիք, որ իսկապէս ոչինչ չէ պարունակում իւր մէջ։ Ի՞նչ է նշանակում, «թէև չէ փայլում իւր նրբութեամբ, իւր ճկունութեամբ, բայց այնուամենայնիւ հասկանալի է» և նա մանաւանդ «չէ հնչեցնում շարքերի միջից լարերի ձայնը»։ Այստեղ մենք կըկրկնենք նոյնը, ինչ որ ասել ենք Մ՝ակի յայտնած կարծիքի մասին։ Նուրբ, ճկուն, չէ հնչեցնում շարքերի միջից լարերի ձայնը, գործածած լեզուի մասին, ընդհանուր բնաւորութիւն են կրում և արտայայտում են անհատի միայն անձնական ճաշակը։ Ա՛յ, օրինակի համար, Տարուզի քննադատը խօսելով մեր գրուածքի մասին, ի միջի այլոց, ասում է. «Հեղինակը ոգևորուած նկարագրել է Նալբանդեանցի կեանքը, նրա հասարակական, գրականական գործունէութիւնը, նրա հրապարակախօսական տաղանդը» և այլն։ Ոչ ապաքէն որպէս զի մի գրուածքի մէջ երևի հեղինակի ոգևորութիւնը, պէտք է որ այդ գրուածքի լեզուն, ոճն էլ մի փոքրը ճկուն ու նուրբ լինեն, մի փոքր էլ «շարքերի միջից լարերի ձայնը հնչեցրած լինի»։ Այդպիսի կարծիքներն իսկապէս կարծիք չեն, այլ «ընդհանուր տեղեր», որոնք ոչինչ չարտայայտելու հետ միասին սակայն մի մեծ առաւելութիւն ունին՝ մի կարգ քննադատների համար—խիստ պատասխանատուութեան չեն ենթարկում նոցա։ Համաձայնեցէք, որ նոքա, որոնք մի երես գրութեան մէջ «կտոր կտոր կըդառնայ», «նա մեղադրում է Նալբանդեանցին այնպիսի յատկութիւնների մէջ», «ուստի և որոնցից նա չէր կարող ազատ լինել», «նոյն իսկ ընթերցողը կարող է կասկածել պ. Զահազիզի արած եզրակացութիւնների մէջ», «որպէս շերամի որդները եռացող կաթսայի մէջ», «այդպիսի սխալ սկզբունքները դաւանում էր քաղաքատնտեսութեան մէջ ֆիզիօկրատական դպրոցը», «կարող է լինել որ հէնց այդպիսի անձնաւորութիւնների հետ Նալբանդեանցը շփումներ ունեցել է», «ինչ է նա գիտակցել իւր բոլոր համոզմամբ» և այլն, հայի ականջին ու լեզուի հոգուն խորթ ոճեր են գործածում, պէտք է քաշուեն դատաւոր լինելու ուրիշների լեզուի կանոնաւորութեան կամ անկանոնութեան, առնուազն չըպէտք է վստահանան խօսելու «շարքերի միջից լարերի ձայն հնչեցնելու» մասին։

Պ. քննադատը մէջ բերելով մեր գրուածքի մէջ իւր գտած պակասութեան վերոյիշեալ կէտերը, նկատում է, թէ ինքը, չէ ուզում երկար ու մանրամասն խօսել, որովհետև ինքը ինչպէս սկզբից էլ ասել էր, մեր գրուածքը Նալբանդեանցի կենսագրութիւնը չէ համարում. իսկ նա, ճիշտ որ, իւր քննադատութեան սկզբում յայտնում է, թէ մեր գրուածքը Նալբանդեանցի կենսագրութիւնը չէ, այլ մի լրագրական յօդուած կամ նիւթեր հանգուցեալի կենսագրութեան համար, և յոյս է յայտնում, որ, վերջապէս, դուրս կըգայ մէկը, որ կըգրէ «չնաշխարհիկ» գործիչի իսկական կենսագրութիւնը։ Ըստ էլ չըցաւելով այն հանգամանքի վերայ, որ պ. քննադատը չէ ուզում երկար խօսել մեր գրուածքի մասին, թէև խոստովանում ենք, մենք կուզէինք իմանալ, թէ այլ ևս ինչ ունի ասելու պարոնը, որովհետև նորա մինչև ցայժմ ասածները խիստ քննադատութեան չեն դիմանում, մենք կաշխատենք պարզել այն պատճառները, թէ ինչու իսկապէս նա մեր գրուածքը հանգուցեալ Նալբանդեանցի կենսագրութիւնը չէ համարում։ Այդ պատճառները պարոնի ասելով երկու են. մէկ որ մեր գրուածքի մէջ չէ երևում «Ազատն Աստուածի» Նալբանդեանցը, միւսը, որ նորա մէջ չէ երևում «վայր ընկնող աստղների հեղինակը»։ Սկզբունքով համաձայնելով պ. քննադատի հետ, որ մեր գրուածքի մէջ թոյլ է դուրս բերուած Նալբանդեանցի իբրև «Ազատն Աստուածի» հեղինակի կեանքի և բնաւորութեան մի առանձնայատկութիւնը, մենք չենք կարող չըյայտնել մեր զարմանքը երկրորդ կէտի կամ պատճառի վերաբերութեամբ։

Մենք չենք հասկանում, թէ մի ինչ նոր կամ առանձին բան է պարունակում իւր մէջ «վայր ընկնող աստղեր» բանաստեղծութիւնը, որ չէ երևում մեր «կենսագրութեան» մէջ կամ որի չերևիլը արդէն զրկում է մեր գրուածքը հանգուցեալի կենսագրութիւնը լինելուց։ Դա, ինչպէս յայտնի է, մի ընդհանրացած ժողովրդական աւանդութեան բանաստեղծական արտայայտութիւնն է, որ ըստ իմաստի և նախնական հեղինակութեան, մինչև անգամ չի էլ պատկանում Նալբանդեանցին. դա մի նըմանողութիւն է։

Մի կարգ մարդիկ կան, որոնք, ինչպէս մէկ անգամ արդէն առիթ ունեցանք ասել, ամեն բանի վերայ կասկածով են նայում, ամեն բանի մէջ մի առանձին խորհրդաւոր միտք ու իմաստ են որոնում։ Դուքա մի բան կարդալու ժամանակ երբեմն խորագիտութեամբ ցուցամատները ճակատներին են դնում և մտածում. «այս բանի մէջ անպատճառ մի բան պէտք է լինի»... այն ինչ յաճախակի գրուածքի մէջ ոչ մի առանձին բան չէ լինում. ի հարկէ, եթէ խելքիդ զօր տաս, երևակայութիւնդ վառես, մինչև անգամ ամենաանմեղ բանի մէջ էլ կարող ես բան գտնել։ Մեզ թւում է, որ մեր քննադատը բոլորովին անմասն չէ այդ տեսակ մարդկանց յատուկ բնաւորութիւնից։ Ապա, ինչպէս կարելի է, որ Նալբանդեանցի գրուածքը լինի, ու մէջը մի առանձին խորհրդաւոր բան չըլինի։ Կարող ենք հաւատացնել արգոյ պարոնին, որ այդ բանաստեղծութիւնը

*) Տես „Տարազ“ № 30

հէնց հանգուցեալի այն գրուածներից մէկն է, որ մի առանձին բան չէ պարունակում իւր մէջ. հեղինակը դորա մէջ նմանողութեամբ նկարագրում է հայերի մէջ եւս գոյութիւն ունեցող աւանդութիւնն երկնային լուսաւորների և մարդկանց յարաբերութեան մասին։ Հայ ժողովրդի կարծիքով երկնքի ամեն մի աստղը կապուած է մի մարդու հետ, նորա կեանքի ու գործունէութեան արտայայտիչ գօրութիւնն է երկնքի վերայ։ Եթէ աստղը խաւարէ, խաւար և չնչին է և նորա հետ կապուած մարդու կեանքը, եթէ փայլուն ու շողշողուն է, փայլուն է և մարդու գործունէութիւնը, վիճակը, եթէ, վերջապէս աստղը ընկնում է, ընկնում, մեռնում է և մարդը և այլն։—

Իսկ թէ ինչու մեր գրուածքի մէջ աղօտ կերպով է երեւում «Ազատն Աստուածի» մէջ արտայայտուած Նալբանդեանցի բնաւորութեան առանձնայատկութիւնը,—այդ մասին մենք արդէն խօսել ենք մեր պատասխանի սկզբում։ Կրկնում ենք՝ «Ազատն Աստուածի» Նալբանդեանցին լիովին նկարագրելու համար, հարկաւոր էր մեզ պատմել հանգուցեալի արտասահմանեան կեանքի մանրամասնութիւնները, նորա զանազան հոչակաւոր անձանց հետ ունեցած ծանօթութիւնը և յարաբերութիւնը, վերլուծել նորա արտասահմանում հրատարակած երկերը և ընդհանրապէս մէջ բերել նորա Եւրոպայում իւր մէջ մշակած ընկերական-հասարակական գաղափարները, որ մեզանից անկախ պատճառներով մենք չէինք կարող և չենք կարող անել։ Մենք չենք հերքում, որ այդ մի զգալի, մի էական պակաս է, որ մնացել է մեր գրուածքի մէջ, բայց չենք կարող համաձայնել, որ դորա պատճառով մեր գրուածքը դադարում լինի հանգուցեալի կենսագրութիւնը լինելուց։ Ի զուր յոյս է կարծել, որ վերջապէս, դուրս կըգայ մէկը, որ կըտայ հասարակութեան Նալբանդեանցի մի այնպիսի լիակատար կենսագրութիւնը, որի մէջ նա երևի իւր բնաւորութեան բոլոր արտայայտութիւններով, իւր բոլոր պատկերով, իւր սոցիալական գաղափարների բոլոր առանձնայատկութիւններով։ Քանի որ մեր գրականութիւնն իւր ներկայ անմխիթար դրութեան մէջ կըլինի, քանի որ հայ կեանքի հանգամանքները դէպի լաւը չեն փոխուիլ, այդպիսի մէկը, գոնէ, մօտ ապագայում աստղարէդ չի դուրս գալ, իսկ հեռու ապագան միայն Աստուծուն յայտնի է...

Թ.

Բանաստեղծ Ս. Չահազիզեանը մեր գրուածքի մասին խօսում է իր «Ամառնային նամակների» Դ. նամակում *)։ Նա այդ նամակում խօսելով ընդհանրապէս Մովսէս Խորենացու մասին և մասնաւորապէս շեշտելով նորա իւր աշակերտների համար դաստիարակիչ նշանակութիւն ունենալու յատկութեան վերայ, ի միջի այլոց, մեր գրուածքին էլ հետևեալ կարճ ու ազդու տողերն է նուիրում՝ «իբրև քո հոգևոր գործունէութեան պտուղ, մի քանի օր առաջ կարդացի Մ. Նալբանդեանցի կենսագրութիւնը։ Քեզ լաւ յայտնի է, որ ոչ մի ազգակցութեան զգացմունք չի կարող շողոքորթել ինձ, մանաւանդ երբ հարկաւոր է գնահատել մի գրական գործ, որ ահա առաջիս է։ Այդ գործը, իրաւի, շատ հետաքրքրական է և գեղեցիկ։ Միայն քեզ պիտի ասեմ, որ «կենսագրութիւնը» պակաս է մի քանի էական կէտերով»։ Մենք այդ տողերը կոչում ենք պարզ և ազդու, որովհետև, ճշմարիտ, նոքա այնքան համառօտ են, որ աւելի նկատողութեան, քան թէ քննադատութեան բնաւորութիւն են կրում, բայց և նոյն ժամանակ այնքան ազդու են, որ ամենաբարեխիղճ քննադատութեան արգասիք կարող են համարուել։

Արդոյ բանաստեղծը մանրամասնութեան մէջ չէ մտնում, չէ ցոյց տալիս մեզ, թէ ինչ ճանապարհով է նա հասել իր արած եզրակացութեան. նա միայն մեր առաջ դնում է իւր մեր գրքի ընթերցմունքից ստացած տպաւորութիւնը, յայտնում է իւր կարծիքը և որոշում է գրուածքի դրական և բացասական կողմերը,—«կենսագրութիւնը շատ հետաքրքրական է և գեղեցիկ, բայց պակաս է մի քանի էական կէտերով»։ Մենք յաւակնութիւն չունինք կարծելու, թէ մեր գրուածքը թերութիւն, պակասութիւն չունի. թերութիւն և էական թերութիւններ կան նորա մէջ, բայց ոչ այնպիսի թերութիւններ, որ ցոյց են տալիս մեզ մեր քննադատները, այլ այն էական կէտերի պակասութիւնները, որոնց վերայ ակնարկում է բանաստեղծը։ Ճիշտ է, նա մէկ-մէկ մէջ չէ բերում պակաս կէտերը, բայց ինքն էլ, մենք էլ շատ լաւ ենք հասկանում թէ ինչ տեսակ այդ պակաս կէտերի մասին է խօսքը։ Ուրիշ խօսքով այդ մեծաւ մասամբ—դարձեալ նոյն պակասներն են, որ նկատել է և Մուրը, ասելով, թէ «կենսագրութեան» մէջ չէ երեւում «օրօրոցում կապկապուած անբարբառ մանուկը»։ Զանազանութիւնը միայն այն է, որ Մուրը այնքան մեծ նշանակութիւն է տալիս այդ կէտերին, այնքան չէ կշռում մեզ շրջապատող հանգամանքները, որ մինչև անգամ յայտնում է, թէ մեր գրուածքը Նալբանդեանցի կենսագրութիւնը չէ, այն ինչ բանաստեղծն ոչ միայն նորան հանգուցեալի կենսագրութիւնն է համարում, այլ և բնորոշում է նորան «գեղեցիկ» և «հետաքրքրական» բառերով։ Նա միայն իբրև մեր գրականութեան և մեր կեանքի հանգամանքներին աւելի լաւ ծանօթ մարդ, բաւականանում է նրանով, որ մատնացոյց է անում այդ պակաս մնացած մի քանի էական կէտերի վերայ, իմանալով, որ նոցա լրացնելը մեզանից կախեալ չէ եղել։

Մեզ համար նամանաւանդ մեծ նշանակութիւն ունի արդոյ բանաստեղծի դնահատութիւնը, որովհետև նա հանգուցեալի ժամանակակիցներից է և նորան համակրող, նորան գաղափարակից ժամանակակիցներից, և որ գլխաւորն է, նա ինքն էլ գրական նուրբ ճաշակի տէր մարդ է։ Մենք կարծում ենք, որ նա, որ իւր «Լևոնի Վշտում» սրտից բղխած այնպիսի տողեր է նուիրել հանգուցեալին, չէր կարող մեր գրուածքը կոչել «հետաքրքրական և գեղեցիկ», եթէ միայն նորա մէջ նկատէր, որ մենք ճիշտ չենք նկարագրել նորան, որ մենք մեզադրել ենք գանազան անարժան յատկութիւններ վերագրելով նորան,

*) Տես „Ամառնային նամակներ“. Նամակ IV, էջ՝ 22.

որ մենք զրպարտել ու բամբասել ենք նորան, ինչպես ակնարկում է Մուրճի քննադատը։ Նա իր «ժամանակակից վէպի» Գ. գլխում խօսելով մեր գրականագէտների հին դասի մասին և պախարակելով նոցա բըռնած ընթացքը մեր գրականութեան մէջ, հակադրում է նոցա Նալբանդեանցին հետևեալ տողերով.

«Հայց քեզ հանում եմ այս տխուր դասից,
Ո՛վ նոր հայախօս և ազնիւ մըշակ.
Քեզ կարող էի անմահ փուշերից
Քաջ մարտիրոսի բոլորել պսակ»։

«Քնարիդ լարերն ազատ շարժուում են,
Երբ ազատ քո կամք, ազատ քո հոգին.—
Այդպէս սոխակներ ներդաշնակում են,
Չեռու վանդակից, թփերի միջին»։

«Սրտիդ կսկիծը—կսկիծ է ազգի,
Եւ ոչ մի գիմակ կեղծաւորութեան,
Գրչիդ վաստակը-մեծութիւն հայի,—
Թէև հայասէրք են քո դաւաճան»։

«Ո՛վ ազգի անդամ, յաւէրժ յարգելի,
Թող մխիթարէ կուրծքիս հառաչանք,
Պայծառ ճակատդ հայրենասիրի,
Որի վարձն եղաւ ապերախտ զրկանք»։

Ս ր. Շ ա հ ա զ ի զ

«Ճնուածների եւ վիրաւորածների» պատմագիրը

(Մի քանի խօսք Դիկկենսի մահուան երեսնամեակի առիթով)

Ներկայ դարում Անգլիան արտադրել է մի շարք տաղանդաւոր անձնաւորութիւններ, որոնք աշխատելով իրանց հայրենիքում գիտութեան և գեղարուեստի զանազան ճիւղերում, մեծամեծ և անուրանալի օգուտներ են տուել ամբողջ մարդկութեանը։ Դարուին, Հեօքսլիյ, Թինդալ, Լիայել բնական գիտութիւնների, Սպենսեր, Միլլ փիլիսոփայութեան, Քառլէյլ, Մաքուլէյ պատմութեան փիլիսոփայութեան, Բեօսքին Ջ. հասարակական և գեղարուեստական քննադատութեան մէջ այնքան ծառայութիւններ են մատուցել մարդկութեանը, որ այսօր ամեն մի լուսաւորուած մարդ առանց խորին յարգանքի և պատկառանքի չի կարող չըյիշել նրանց անունները։ Ս՛յս փառաւոր պլէյատայի շարքի մէջ է և ոչ պակաս իրաւամբ մեր դարի ամենամեծ ռոմանիստներից մէկի՝ Չարլս Դիկկենսի անունը, որի մահուան երեսնամեակը լրացաւ այս 1 տարի յունիս ամսի 9-ին։

Դիկկենսը ծնուել է 1812 թ. փետրուարի 7-ին Լոնդոնում։ Նրա հայրը թէև բարի, բայց թեթևամիտ և վատնող մարդ էր, այնպէս որ շուտով իր բոլոր կարողութիւնը վատնելով (յիշում էք մխստեր Միկոբէրին Դ. Կոպպերֆիլդի մէջ) և պարտքերի տակ ընկնելով, բանտարկուեց իբրև անկարող պարտապան Լոնդոնի Թրաշէլ'սի բանտում («Փոfրիկ Դոrրիդի» մէջ նկարագրուած է այդ բանտը)։ Իր երեխայութիւնը Չ. Դիկկենսը անցկացրեց բոլորովին մուգացութեան տրուած իր ծնողների կողմից, որոնք նրա մասին ոչինչ լուրջ հոգս չէին տանում։ Վազ կարդալ սովորելով նա անձնատուր եղաւ մեծ ջանասիրութեամբ ընթերցանութեան, որը դարձաւ նրա ամենասիրելի պարապմունքներից մէկը։ Կարդացած գրքերի մէջ առանձնապէս նա հաւանում էր Ռոբինզոնին, Դօն Քիշոտին, Ժիլ Բլազին, Օլիվեր Գոլտսմիտ, Վիքֆիլդեան քահանայ, անգլիական րէալիզմի հայր Ֆիլ'դինգի գրուածքները և այլն, և այլն։

Չընայելով այս բոլորին, նա միշտ ձգտում էր իր կրթութիւնը լրացնել ուսումնարանում, և նրա բոլոր երեխայական ցնորքները ուղղուած են դէպի ուսումնարան։ Հօր բանտարկեալ ժամանակ յետոյ Դիկկենսի ծնողները ընտանիքի բիւդժէտը մեծացնելու համար նրան տուին մի վաքսի ֆաբրիկա իբրև բանուոր։ Ի հարկէ, ապագայ մեծ ռոմանիստի ձգտումներին բոլորովին չէր յարմարում նրա միապաղաղ և ձանձրալի պարապմունքը, որը մտածում էր ապագայում դառնալ գոնէ փոքր ինչ կրթուած մարդ։ Նրա բախտից հայրը մի փոքրիկ ժառանգութիւն ստացաւ, որի միջոցով նա կարողացաւ դուրս գալ բանտից և Դիկկենսը այս դէպքից քիչ յետոյ ընդունուեց մի ուսումնարանում, որտեղ նա միայն երկու տարի մնաց, որովհետև հայրը դարձեալ իր կարողութիւնը վատնեց և 15 տարեկան Դիկկենսը ստիպուած եղաւ իր համար հաց վաստակել, մի նոտարիուսի մօտ կլերկի (գրագրի) պաշտօն ստանալով, որի համար նա շաբաթը 15 շիլլինգ էր ստանում։ Չընայելով որ նա միայն երկու տարի մնաց ուսումնարանում, բայց այդ հանգամանքն այնքան մեծ ազդեցութիւն ունեցաւ Դիկկենսի մտաւոր կեանքի վրայ, որ նա այժմ սկսեց ինքնաշխատութեամբ շարունակել իր կիսատ մնացած կրթութիւնը, ամենայն ժրաջանութեամբ յաճախելով բրիտանական մուզէյ և միևնոյն ժամանակ մի կերպ սովորելով ստենոգրաֆիա (յիշում էք Դ. Կոպպերֆիլդին), դարձաւ նախ «Morning Cronicle» լրագրի ռեպարտեօրը և ապա մշտական աշխատակիցը։ 1833 թ-ին լոյս տեսաւ Դիկկենսի առաջին բելլետրիստական գրուածքը «Ձաշկերոյթ չինացիների պլեյն մօս» վերնագրով, իսկ երեք տարի յետոյ «Times»-ում լոյս տեսաւ Դիկկենսի «Պիկուիկեան կլուբը» յայտարարութիւնը, որը միանգամից անգլիական կրթուած հասարակութեան ուշադրութիւնը դարձրեց նոր սկսող բելլետրիստի վրայ և «Պիկուիկեան կլուբը» սկզբից հէնց 40,000 ընթերցող ունեցաւ։ «Պիկուիկի կլուբը» փուրօր յարուցեց անգլիական ընթերցող հասարակութեան մէջ և ամեն տեղ սկսեցին խօսել նրա մասին, սկսեցին երևալ Պիկուիկեան սիգարներ, գլխարկներ, ձեռնափայտեր և այլն։ Սկզբում Դիկկենսը մեծ ուշադրութիւն չէր դարձնում իր Պիկուիկի վրայ, որի պատճառով գըրուածքի առաջին գլուխները կարրեկատուրայի տպաւորութիւն են թողնում, բայց յետոյ նա ոգևորուեց իր Պիկուիկով և նրանից ստեղծեց մի անմոռանալի և որոշ չափով հանրամարդկային տիպ, մի տիպ, որ ոչ մի ընթերցողի յիշողութիւնից չի դուրս գալիս։ Պիկուիկից յետոյ մինը միւսի յետևից սկսեցին դուրս գալ նրա ռոմաններըը, որոնցից իւրաքանչիւրը իրանց տաղանդաւոր հեղինակի փառքի վրայ մի բան աւելացնում էր և սրանք բոլորը կազմում են ամբողջ 40 հատոր։

W.

(Վերջը միւս անգամ)

ՄԱՀՓՈՅԻ

† Ֆրիդրիխ Նիչէ

—

Ամսոյս 12-ին Վէյմարում վախճանուեց դարիս նշանաւոր փիլիսոփաներից մէկը—Ֆրիդրիխ Վիլհելմ Նիչէ։

Նա ծնուել է 1844 թ. Սակսոնիայում, 1869 թ. լեզուագիտութեան դասախօս է դառնում Բազելի համալսարանում։ 1879 թ. վատառողջութեան պատճառով նա վերջնականապէս թողեց պրոֆեսսորական պաշտօնը և սկսեց ապրել միայնակութեան մէջ—Իտալիայում և Զուիցերիայում։

1880 թ. նա բոլորովին քայքայուեց հոգեպէս և տեղաւորուեց Ենայի հիւանդանոցում, հոգեկան հիւանդների շարքում։ Բժշկական ոչ մի միջոց չկարողացաւ բուժել բարոյագէտ փիլիսոփայի հոգեկան գրութիւնը և նա երկար տանջանքներից յետոյ կնքեց իր մահկանացուն, թողնելով բազմաթիւ գրական վաստակներ։

Նրա փիլիսոփայութեան էութիւնն հետևեալն է. ամեն մի գիտութիւն և մտածողութիւն պայմանական է։ Նա ապացուցանում է, որ բոլորովին սխալ է մեր այժմեան հասկացողութիւնը բարու և չարի, ճշմարտութեան և ստութեան մասին. ուշադրութեան արժանի են այն ամենը, ինչ որ կեանքն է առաջացնում. բարոյականութիւնն այստեղ ոչինչ է։

Fiat vita, percat veritas. (Կեցցէ կեանքը, կորչի ճշմարտութիւնը)։ Նա շատ բարձր է դասում ստուբեաց ոյժը։ Նիչէի իդէալն է կազմում կեանքից բարձր անհատական մարդը, որի զօրեղ կամքն է բարու և չարի գնահատողը։ Մարդկութեան նպատակն է ամեն կերպ ձգտել բարձր իդէալի. իսկ դրա համար իւրաքանչիւր անհատ պարտաւոր է զարգացնել, գագաթնակէտին հասցնել իր հաճոյքները։

Չոր ոյժ—ահա այն նիւթը, որ այնպէս ոգևորում էր բանաստեղծ փիլիսոփային։ Նրա գրուածքներից գլխաւորներն են «Also sprach Zarathustra», «Senseits von Gut und Böse», «Der Antichrist» և այլն։

Նիչէի բոլոր գրուածքներում ուժեղ արտայայտութիւն են ստացել էստիտիքան, անհատականութիւնը, ազատութեան տենչը և այլն։ Նիչէն ինքնուրոյն մտածող և խորագնին գեղարուեստագէտ էր բառիս լայն մտքով։

—

Նամակ խմբագրութեան

—

«Մշակը» շարունակում է աւելի երկար դրութիւններով մեզ «չարժանացնել իր ուշադրութեան պատիւն»... և այս անգամ էլ, իր № 144-ում, կրկին նոյն Լէօ—Բաբախանեանի մէջոցով, փրփրած, իր չիշոցներն է կրկնապատկում իմ դէմ...

Ես արդէն իմ առաջին յօդուածում ասել եմ, որ «Մշակը» տարիների ընթացքում անընդունակ է գտնուել որևէ է լուրջ բանակռիւ մղելու. նրա միակ բանակռիւը եղել է այն, որ կարողացել է իր հակառակորդին անուանարկել ու հայհոյել. իսկ այդ տխուր դերը ժամանակի ընթացքում կատարել է «Մշակը» սիստեմատիկ կերպով, շնորհիւ այն վատ, փչացած ինստիկտների, որոնցով սնուած են նրա ղեկավարները... Եւ մի՛թէ այժմ նոյնը չենք տեսնում. մի՛թէ ներկայ բանակռիւների ժամանակ նոյն լպիրշ հայհոյանքները չէ՞ գործողը, այն էլ ցոփութեան հասցրած. և մի՛թէ նոյնը չէ կատարելու նաև ապագայում, քանի որ գրական հրապարակը չի մաքրուիլ այդ տեսակ արատաւորուած գրիչներից, որոնք իրանց նման կամենում են հրապարակում ամեն թարմ ու մաքուր բան նեխել, մեռցնել...

Հայհոյանքի միակ պատիժը—արհամարհանքն է. և ես այդպէս էլ կանեի, եթէ միայն կարիք չըզգացէր վերջին անգամ ընթերցողի առաջ պարզելու Լէօ—Մշակի լոգիկային ձեւերը, որի վերջին փշրանքներն արդէն իսկ չիշոցների հետ ձուլելու վտանգին են մատնուած. և երկրորդ էլ, ընդգծելու նոր երևցած լակեանի տիպը մեր գրական-հասարակական կեանքում։

Նախ լոգիկան.

Ղազարեան—Իմ առաջին յօդուածում ես ցոյց տուի, որ Մշակը Մուրճի նկատմամբ դիտմամբ, նսեմացնելու նպատակով, փակտերը աղաւաղում է ու կեղծում և մէկը հաւասարացնում է հնգին—(Փակտեր մենք առաջ ենք բերել Մուրճի № 5—6-ում)։

Լէօ-Մշակ.—Մենք Մուրճը չենք ունեցել աչքի առաջ, այլ ընդհանրապէս հայ ամսագրութիւնը. Ղազարեան թեթև խարդախութիւն է գործել «ամսագրերից խօսքը «ամսագրից» դարձնելով։ (Մշակ № 132)։

Ղազարեան.—Դուք ուրանում էք ձեր հրապարակական գրութիւնը, ուր միմիայն Մուրճն էք համեմատութեան առնում. իսկ ամսագրի եզակի կամ յոդնակի գործածութիւնը ձեզ չէ կարող ոչ մի դէպքում փրկել ձեր գործած չանցանքից—(մի շարք ակնյայտ Փակտեր, որ առաջ են բերած։ Տարազ № 29)։

Լէօ-Մշակ.—Տեսէք, տեսէք. Ղազարեան իր գործած խարդախութիւնը անխօս գրաշարի վիզն է գցել։ (Մշակ № 144)։

Մի այլ տեղ՝

Լէօ.—Անցեալ տարի ես յայտնեցի, որ ինձ համար ստորութիւն կըհամարեմ պատասխանել Արասխանեանին։ Իմ խօսքը ես պահել եմ և կըպահեմ (!!!) (Մշակ № 132)։

Արասխանեան.—Դուք միստիֆիկատոր էք. «Մամուլ» մասում իւրաքանչիւր ամիս շարունակ մէկ, երկու, երեք, չորս անգամ գրել էք թէ իմ և թէ Մուրճի մասին. և այն էլ անստորագիր, որ նախ՝ հասարակութիւնը մոլորեցնէք և երկրորդ էլ, տեղն ընկած ժամանակ ուրանաք, ինչպէս և ուրացաք այժմ։ (Տարազ № 29)։

Լէօ—Դուք հետազօտող ոստիկան էք։ Ո՞րտեղից եզրակացրիք, որ Մամուլ վերնագրով յօդուածները ես չեմ գրում։ (Մշակ № 144)։

Այսպէս ուրեմն Լէօ—Մշակի լոգիկային ձևերից երկուսին ենք ականատես. առաջինը նրա ամենասովորական ձևն է, որ իւրաքանչիւր բանակռւի ժամանակ կարող է հանդիպիլ, դա կենդրոնախոյս ձեւն է. այսինքն՝ կենդրոնական հարցից գլուխ թափելու ձևը. իսկ երկրորդը՝ բժշկական terminով կոչում են անընորմալ ձեւ կամ մտածողութիւն, որովհե-

տև միևնոյն մարդը միաժամանակ չէ կարող լինել և ես չեմ և ես եմ...

Ասենք այս բոլորը մի բան է ցույց տալիս, որ Լէօն նեղն է լծւել և ամեն կերպ ձգտում է այդ դրութիւնից դուրս գալ։ Եւ ահա այդ է պատճառը, որ Լէօն, ընթերցող հասարակութեան վրայ տպաւորութիւն գործելու համար, աշխատել է էֆեկտների դիմել, օր. «մենք ըստ էութեան չենք պատասխանում» (այն ժամանակ դուրս կըգար, որ Մուրճին էք ակնարկել և կըստացւէր ձեր մտածողութեան անճոռնմալ ձեւը), «Լան և ուրիշ խարդախութիւններ և աղաւաղումներ». «գրաշարը կարող էր մի տեղ սխալւել և ոչ թէ երկու տ'ղ» (!!!)։

Բայց հետաքրքիրը լալկանի տիպն է.

Անշուշտ շատերին պատահած կըլինի տեսնել Հալաբարի կամ գիւղական մի որևէ նեղ փողոցներից մէկում կանացի կռիւներ, ուր ժողոված են լինում բաւականին թւով կանայք, աղջկերք, մանր մունր ոտաբոբիկ, դլխաբաց երեխայք... Եւ դրանցից մէկը, սովորաբար սևերով կին, ահագին ճրւճրւոց բարձրացրած, էլ հայհոյանք ասես, որ չի թափում հարևանուհու հասցէին... ախր ինչ է, ինչ է պատահել. հետաքրքրւում են այս ու այն կողմից. Է, ոչինչ. մի շատ սովորական բան. հարևանուհին մի օտարի մօտ ասել .է թէ, այսինչը, բամբասող կին է և իրանից բամբասում է շարունակ, մի հասարակ ճշմարտութիւն. և ահա հարսանիքը պատրաստ է. էլ ցեխ չի թողնում, որ չըթափի... Բայց երբ տեսնում է հանդիսականները «բարի աչքով» չեն նայում իր արաձին, նոյն իսկ ղնամիբ են անում. հայհոյանքը թողած լացն սկսում ու հետն էլ, էտ էլ լաւութիւնս է, նրա լացքն անեմ, հացը թխեմ, երեխին լողացնեմ... Եւ ահա ճիշտ և ճիշտ լալկան կնոջ դերն է բաններնում ներկայումս Լէօն. ինչպէս. գալ ու հրապարակով ասել մի ճշմարտութիւն—թէ Լէօն կեղծող է. և այն էլ ով. մի Ղազարեան. դէ, արդէն բաւական է, ականջներդ փախցրէք Լէօի դոյնզդոյն հայհոյանքներից... Բայց լալկան կնոջ պէս Լէօն էլ, երբ տեսնում է հայհոյանքից բան չի դուրս գալ, խեղճացած դառնում է էլի իր մշտական հաւատարիմ Մօակի ընթերցողներին... և սկսում. «Ես երկար-տարիներից ի վեր աշխատել եմ գրական մի համեստ մշակի դերում իմ ոյժերի ներածին չափ ծառայել մեր հասարակութեան։ Այն ժամանակից... սկսեցին ամեն տեսակ լիրբ հայհոյանքներ թափել ինձ վրայ. . կարծեմ այլ ևս կեղտ ու ցեխ չէ մնացել, որի մէջ չըթաթախէին իմ անունը... Բայց... թողնենք, ընթերցող. . իսկ մենք աշխատենք. որքան կարող ենք ծառայել հասարակական գործին»։

Այո, ճիշտ լալկանի դերում...

Սա մեր վերջի նամակը կըլինի այս խնդրի առիթով, որն առանց այն էլ անյափ երկարեց։

Արշակ Ղազարեան

Գրական նորութիւններ

Հաստատ աղբիւրից կարող ենք հաղորդել, որ պ. Աւետիք Արասխանեանցը թողնում է Մուրճ ամսագրի հրատարակչութիւնը, որի իրաւունքը նա ձիջել է պ. Կոնստ Կրասիլնիկեանին պայմանագրով 31-ից անցեալ մարտի, որի համար հաստատութեան թուղթը մամուլի գործերի գլխաւոր կառավարութիւնից ստացել է ներկայ օգոստոսի 10-ին։ Դոքտոր Ա. Արասխանեանցը շուտով թողնելու է նաև մեր երկիրը և ուղևորւելու է Եւրոպա մի երկու տարի այնտեղ անցկացնելու դիտաւորութեամբ՝ թէ իր առողջական դրութիւնը վերականգնելու և թէ գրական և թէ ուսումնական զբաղմունքներին հետևելու համար։

Տեղը չէ այստեղ «Մուրճի» գրեթէ 12-ամեայ գործունէութեան մասին խօսել, բայց կարող ենք այժմից ակայել, որ պ. Աւետիք Արասխանեանցը իր ստանձնած գործը տարել է անօրինակ եռանդով և անձնւիրութեամբ, ստեղծելով մանաւանդ երիտասարդ սերնդի մէջ համակրութիւններ, որոնք կապեցին նրան նաև ապագայ գործունէութեան հետ։

Պ ր ո ց ա կ ա ն

Առաջարկած է փոփոխել Թիֆլիսի Միքայէլեան Արհեստաւորաց դպրոցում գործադրւող կանոնադրութիւնը, որի մասին և սկսած է գրագրութիւն։

—Թիֆլիսի Առևտրական դպրոցը մտնողների թիւը այնքան աւելացել է, որ հոգ·սբարձական խորհուրդը ստիպւած է եղել վարձել և մի ուրիշ տուն։ Ուսումնարան մտնել ցանկացողների թիւը հասել է 400 հոգու և օր-աւուր էլ աւելանում է։

—Թիֆլիսում (Հալաբար) կլասիքական պրոգիմնազիսնի փոխարէն արդիւնաբերական դպրոց բանալու խնդիրը յանձնւած է քաղաք. դպրոցական խորհրդին։

ՍՄՀՈՂ ԹԱՄԲԻ

Բարձրագոյն հրամանով օգոստ. 16-ից հրամայւած է աւելացնել օղիի, գինիի, ցգիի և ծխախոտի աքցիզը, Ձիու նաստանի համար եղող արտակարգ ծախքերի պատճառով.

—Այսուհետև նահանգապետներին իրաւունք է տրւած, որ նրանք իրանց իշխանութեամբ թոյլատրեն շինելու մանր երկաթուղային գծեր, որոնք կայարանները կըմիացնեն տեղական այս կամ այն կենդրոնների կամ գործարանների հետ։

—Ռուխարայի Էմիրը, որ Ռուսիայում էր գտնւում, օգոստոսի 13-ին Բագւից ուղևորւել է Բուխարա։

—Թիֆլիսի լուսկերեան (զինւորական) դպրոցից այս տարի աւարտել են 93 հոգի, ստանալով սպայութեան առաջին աստիճանը։ Սրանցից 3-ը ուղարկւած են Հեռաւոր Արևելք ծառայութեան։

—Կովկ. Գլխաւոր զին.-բժշկական վարչութեան պահանջմամբ զինւորական ֆելդշերներից 20 հոգի ուղարկւած են Հեռաւոր Արևելք։

—Մինչև օգոստոսի 5-ը հանքային ջրեր այցելել են հիւանդներ—Պեատիգորսկում—6,135 հոգի, Էսսէնթուկում—2,631 հ., Թէլեզնովոդսկում—1,785 և Կիսլովոդսկում 1,809 հոգի, անցեալ տարւանից մինչև նոյն ժամանակը 249 հոգով աւելի։

—Рус. Вѣд. հաղորդում է, որ Օդեսայում սկսել է հրէաների դէմ անկարգութիւնների գործը, որ տեղի ունեցաւ

անցեալ ամսին։ Մեղադրողների մեծամասնութիւնը բանւորներ են։ Նրանց մէջ գտնւում են և կանայք։ Բոլոր մեղադրողները դատապարտւած են վեցամսեայ բերդարգելութեան։

—Օգոստոսի 7-ին Օդեսայում մի յանձնաժողով է կազմւել կոմսուհի Շուվալովայի նախագահութեամբ, որ օգնում է Չեռաւոր Արևելքում հիւանդներին և վիրաւորներին։ Ս.Խաչի ընկ. այս գործը տեղական հասարակութեան կողմից արժանացել է լի ու լի համակրութեան։ Բազմաթիւ տիկնայք արձագանք տւին, առաջարկելով իրանց աշխատութիւնը և մասնակցութիւնը։

—Պետերբուրգում 1901 թւի յունւարի 1-ից կբսկսի իր գործունէութիւնը ռուս արհեստաւորների փոխադարձ օգնութեան նոր ընկերութիւնը։

—Չանգուցեալ Գրիգոր Ջանշեանը անդամ էր գրականագէտների և գիտնականների փոխադարձ օգնութեան ընկ. Մոսկւայի ճիւղի։ Այդ ընկ. գանձարանում ժողովւած իր 1,692 ր. հանգուցեալը կտակել է նոյն ընկերութեան գանձարանի, իսկ ներկայումս այդ փողը համարւում է անձեռնմխելի դրամագլուխ գրականագէտների դրամարկղի։ Բացի դրանից Рус. Вѣд.-ի մի տասներորդական մասից ստացւող արդիւնքը՝ այն է 5000—10,000 ր. տարեկան, թողել է հանգուցեալը եղբօրը, այն պայմանով, որ առաջի տարին այդ արդիւնքը յատկացնի նոյն թերթի գրասենեակում և տպարանում ծառայողներին, իսկ միւս տարիներին այդ արդիւնքից մասն հանի Թիւրքաց-Հայաստանի որբանոցներին։ Իր գրադարանը հանգուցեալը կտակել է ս. Էջմիածնին, այն պայմանով, որ եղբայրն այժմ իրաւունք ունի ընտրել և վերցնել այդ գրքերից որը ինքը ցանկանայ։ Ի վերջոյ 5,000 ր. գրած է Ամեն. Հայոց Կաթուղիկոսի տրամադրութեան տակ և 1000 ր. յատկացրած է բարեգործական հիմնարկութիւններին։

—**Հեռագիրը գուժեց, որ օգոստոսի 12-ին Վէյմարում կաթւածահար եղաւ փիլիսոփայ եւ յայտնի բերդող Ֆրիդրիխ Նիցշէ։ Նա վերջին տարիներս տանջւում էր ուղեղի ցաւերից եւ հոգեկան հիւանդութիւնից։ Նշանաւոր բարոյագէտի պատկերը կրօպագրեցիմ մարզի հետեւեալ №№-ից մէկում։**

—Нов. Обозр. լրագիրը, որ ուշամսեայ դադարումից յետոյ սկսեց հրատարակել օգոստ. 18-ից, հաղորդում է. „Վերջին անձրևները, որ տեղացին Թիֆլիսի նահանգում, կանգնեցրել են գիւղական աշխատանքները։ Վերին Քարթալինիայում և Գորիի գաւառի մի քանի տեղերում խուրձերը մնում են դաշտերում և ծլում են։ Կալել կասելը ժամանակաւորապէս դադարեցրել են։ Ջատ վնասւել են և խաղողի վազերը, որոնց վրայ նկատւում են զանազան սունկային հիւանդութիւններ“։ Մեր ստացած տեղեկութիւններից էլ երևում է, որ Բորչալուի գաւառում վերջին անձրևներից սաստիկ վնասւել են գիւղացիների ամբողջ տարւայ բերքը և աշխատանքը։ Իսկ Լոռի գաւառամասի մի քանի գիւղերում արտերը դեռ չհնձած՝ նորից բսկսել են ծլել։

—Кавказъ-ում կարդում ենք. „Ներքին գործերի մինիստրութիւնը հաստատել է Բագւի առաջին կարգի վաճառականի որդի Կոստանդին Սարգսեան Կրասիլնիկեանին հրատարակիչ Թիֆլիսում հրատարակւող Мшеւ ամսագրի“։

Ճանապ. հաղորդակցութիւն

Ճանապարհորդների դիւրութեան համար, Արևմուտքից Կովկաս, Ռոստով, Եկատերինոսլաւ և առհասարակ Դեպի Հարաւ, Հարաւ-արևելք և յետ, որոշւած է ուղղագնաց մարդատար գնացքների երթևեկութիւն սկսել Վլադիկովկասի, Վոլոչինսկի և Օդեսայի մէջ։

— Ռուսաց երկաթուղիական գործնացքների խորհրդակցութեան ժողովը անհրաժեշտ է գտել տեղական երկաթուղիական վարչութիւններին կից հիմնել թաղման գանձարաններ ծառայողների համար։

Խառն լուրեր

Պարսից Շահի արտասահման գնալուց յետոյ—Тифл. Лист. ասելով—Պարսկաստանում խոշոր անկարգութիւններ են եղել։ Գլխաւոր առիթը անկարգութեան տւել է Թեհրանի նահանգապետը, որ հացի գինը, Շահի բացակայութեան պատճառով, սկսել է բարձրացնել, ինքն էլ տէր լինելով բաւականաչափ հացի ամբարների։ Երբ ժողովուրդը նեղն ընկած դիմել է եւրոպ. դեսպանութիւններին իր շահերը պաշտպանելու, վերջիններս մերժել են. այն ժամանակ ժողովուրդը յարձակւել է դեսպանութիւնների վրայ, որ սակայն ներկայումս պաշտպանւում է զինւորներով։ Այժմ քաղաքը զինւորական դրութեան մէջ է յայտարարւած։ Ժողովուրդը մինչև հիմա էլ յուզման մէջ է և անկարգութեան պարագլուխները դեռ չեն ձերբակալւած։

—Գերմանիայում 12,000 բանւորներ մնացել են պարապ։ Շատ գերմանական բանկեր սնանկացել են։ Բերլինում սպասում են յուրջ ֆինանսական ձախորդութիւնների ինչպես Գերմանիայում, այնպէս էլ ուրիշ երկրներում։

—Դաշնակից զօրքերը Պեկինը գրաւելուց յետոյ բանակ են ձգել կայսրական պալատի շուրջը, որ բռնւած է չինական մի քանի զինւորներով։ Գեներալները վճռել են միջազգային զօրքերն անցկացնել պալատի միջով, որի դռները այնուհետև կբփակւեն։ Կայսրն ու կայսրուհին հեռացել են Պեկինից։

Դաշնակիցները աշխատում են գտնել ապստամբութեան գլխաւոր պարագլուխներին՝ պրինց Տուանին, Շուտունգին և Տժաո Ֆիւ-Հայոյին։ Դեսպանութիւնները երկու ամսւայ պաշարման ընթացքում կորցրել են 75 սպանւած և 120 հոգի վիրաւորւած։ Ներկայումս Պեկինում եապոնական զորքի համեմատ, հիմնւած է զինւորական վարչութիւն, որի մէջ մտնում են մի մի հոգի բոլոր դաշնակից պետութիւններից։

— Հարաւ.Աֆրիկայում չընայելով բօէրների յամառ դիմադրութեան, անգլիացիները ամեն միջոց գործ են դնում նրանց վերջնական պարտութիւն հասցնելու։ Ջարմանքի առարկայ է դարձել Դեւէտ զօրավարի քաջութիւնները նա հմտութեամբ նահանջում է անգլիական զօրքերի առաջից և չնկարծ նրանց ծուղակի մէջ գցելով, գերում հազարաւոր մարդոց։ Սակայն վերջին հեռագիրներից երևում է, որ անգլիացիները երկու նշանաւոր յաջողութիւն են ունեցել։ Ռուլլերը մի արիւնահեղ ճակատամարտից յետոյ գրաւեց Բերգենդալ, մի շատ զօրեղ դիրք։ Դալմուտի հիւսիս-արևմտեան կողմում, իսկ Վենբուրգի մօտ, գերի է ընկել բօէրների ոչ պակաս նշանաւոր զօրապետ Ալիւէ։

—Լոնդոնից հեռագրում են, որ Գլազգոյում ժանտախտ է երևացել և դրութիւնն աւելի լուրջ է, քան կարծւում էր։ Մի քանի հոգի մեռել են այդ հիւանդութիւնից։ Քառասուն ընտանիք առանձնացրած են և գտնւում են բժիշկների հսկողութեան տակ։

Նոր հրատարակութիւններ

1. Բժ. Ա. Բուդուղեան. «Սիֆիլիս» երկրորդ լրացրած հրատարակութիւն, գինը 10 կոպ.

2. Ղ. Աղայեանց. — „Арекназанъ или заколдованный міръ", пер. съ арм.—Амировъ. цѣна 20 к.

3. Վ. Հիւգօ «Արդար ծերուկը», փոխ. Ա. Մխիթարեանի. 81 եր գինը 15 կոպ.

4. Է. Օժեշկօ, «Իլիաճկա», 14 եր. գինը 10 կոպ.

5. «Տեղեկագիր և հաշուեկշիռ 1899—1900 տարեշրջանի Թաւրիզի հայոց հեաց բարեգործական ընկերութեան».

6. «Ս. պատարագի երգեցողութիւն և յաւելուած՝ յարմարեցրած նորուսների համար», կազմեց Ս. 47 եր. գինը 15 կ.

Խմբագիր՝
Ղ. Մարտիրոսեանց

Հրատարակիչ՝
Տիգրան Նազարեան

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔ. ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ

տեղեկացել է, որ ինչ-որ Նրան անյայտ անձինք առաջարկում են «Լոդկիս-Դորա» և «Նախալովկա» կոչուած տեղերում հողեր կապալով վերցնել ցանկացողներին՝ որոշեալ վճարով ձեռք բերել վարչութիւնից յիշուած կապալները. Կամենալով վերջ դնել դիւրահաւան մարդկանց շահագործողների արարմունքին, վարչութիւնը յայտնում է ի գիտութիւն ամենքի, որ Նախալովկայում հողեր պետ. ևս չեն տրւում կապալով, մինչև ընդհանուր յատակագծի կազմելը, իսկ «Լոդկիս-Դորայում» տրւում են առանձին կանոններով, որոնք հաստատուած են Թիֆլիսի քաղաքային խորհրդարանի կողմից և այն անձինք, որոնք ցանկանում են հողեր կապալով վերցնել այս վերջին տեղում, կարող են ստանալ առանց որ և է միջնորդութեան, դիմելով իրանց խնդիրներով ուղղակի վարչութեան, եթէ միայն համապատասխանում են խորհրդարանի որոշման մէջ յիշուած կանոններին. 3—1

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԽՄԲԱՊԵՏՆԵՐ,
եթէ կուզէք նորուս երգիչներիդ ձեռքը տալ՝
Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԵՐԳԵՑՈՂՈՒԹԵԱՆ
ամենայարմար տեղը, դիմեցէք, Армавиръ (Кубан. обл.) Регенту Симеону Шаанянцъ.
Գինը 15 կոպ.
50-ով պահանջողին 20% զիջում.
3—1

Պատուաւոր ընտանիք ԲԵՐԼԻՆՈՒՄ ընդունում է ճանապարհորդ— հիւրեր. Ձաթաթը 35 մարկից (17 ր.) սկսած (սենեակ, առաւօս երեկոյ չայ, սուրճ, ճաշ եւ ընթրիք)

PENSION

Frau Leut, J. Hoeltzl-Sheridan
Խօսում են ֆրանսերէն և անգլիերէն
BERLIN W. Potsdamer Str. 31 II.
10 – 6 Fahrstuhl.



Պարիզում, Լուքսեմբուրգի այգու հանդէպ ընտանիքի մէջ կահաւորուած սենեակ, ճաշ և ամեն յարմարութիւն.

Hotel de lobservatoire
pension de famille
En face le jardin du Luxemburg
107, Boulevard Saint-Michel, 107
PARIS

Table d'hote a midi et a 7 heures
CUISINE BOURGEOISE
Lumière électrique dans toutes les chambres
Prix Modérés Գ. 0—7

Նկարիչ ՌՈՁԻՆԱՁՂԵԱՆի արհեստանոցը ՊԱՐԻԶՈՒՄ՝ բաց է հաստարակութեան համար ԱՄԵՆ ՕՐ 10 ժամից մինչեւ 2 ժ. կեսօրից յետոյ
PARIS
Boulevard Montparnasse, 132.
5—4

ԱԶԱՏԱՄԱՐՏ
ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԱՄՍԱԳԻՐ
ներկայ 1900 թ. բաժանորդագրութիւնը շարունակւում է
Տարեկան գինը 3 ր., արտասահմանի՝ 4 ր.
Հասցէն՝ ТИФЛИСЪ. Редакція жур. „АГБЮРЪ".

Ընտանիքներով Պարիզ եկողներին առաջարկւում է կահաւորուած սենեակներ, ճաշ, նախաճաշ.
HOTEL LARTISIEN
(près la Madeleine)
English Spoken V. ROZÉ Table d'hote déjeuner a la carte
Propriétaire
4, Passage de la Madeleine, 4
PARIS
Գ. 0—7

Պարիզի կենդրոնում Մադլեն եկեղեցու մօտ՝ հասեւս, բայց մաքուր կահաւորուած սենեակներ
Hotel Peiffer
et
MAISON MEUBLÉE
6, Passage de la Madeleine, 6
PARIS
Déjeuners-dîners-table d'hote
La Maison prend des Pensionnaires.
Chambres depuis 3 fr. à 6 f.
Գ. 0—7

ԱԽՏԱՐՔԱԼՔԱՓԻ ԱՂԻՏՔ
Պատշաճ բացատրութիւններով պատկերներ երկրաշարժից վնասուած դիւղերի.
Գինն է 25 կոպ.
Դիմել՝ Тифлисъ, ред. „Тазазъ"

Дозв. ценз. Тифлисъ, 18-го августа 1900 г. Տպարան Կ. Մարտիրոսեանցի Тип. К. И. Мартиросинца ул. № 1–2